

Հափողէոն Գ. կայսրը այս տեղոյս
զրիցը ախորժելով, պզտի բայց գեղե-
ցիկ դղեակ մը շինել տուաւ, անմիջա-
պէս ծովուն հանդէպ. հոս տեղուանքն
է որ ամառ ատեն կայսերական ընտա-
նիքը կը քաշուի, ոչ միայն օդոյ ու բա-
ղանեաց համար, այլ նաև հանգստեան
բարիքը վայելելու:

Դղեկիս անունը, ըստ կայսրուհւոյն
անուան, Եզդիսեան դաւադարաւ կը
կոչուի:

Պիարիցի բնակիչքը մօտ 2000ի կը
հասնին:

ԱՄԾԱԽՈՍ

Ի յիշտանքօլ քաղաքն մէկ քարէ
մարդ էր շինած, և անուն Ամծախօս.
որ զինչ 'ի քաղաքն անգին զումաշ ծա-
խուէր՝ որ մարդ զգինն չգիտէր, նա կ'ա-
սէր զգինն: Օր մի ձի մի կու ծախէին.
և գնացին Ամծախօսն 'ի քով. և ասէ.
Այսօր աժէ 100,000, և վաղն մէկ ֆլօրի:
Եւ մէկայլ օրն սատակեցաւ. և տուին
զսաղրին՝ մէկ ֆլօրի:

(Իշխան ոմն եկեալ) 'ի մօտ Ամծա-
խօսն՝ (ասէր). Մուրանալ կ'ամաչեմ,
և արուեստ չգիտեմ, և 'ի սովու կու մեռ-
նիմ, ես ու իմ տղայքն. Աստուած ի
քեզ բարեխօս, կ'երթամ գողութիւն
կ'առնեմ. թէ զան 'ի քեզ հարցանեն,
մի ասեր: Ասաց Ամծախօս, թէ իմ
տղսմն՝ ճշմարտութեան է շինած. ճար
չկայ որ չասեմ:— Ասաց իշխանն. Աս-
տուած 'ի քեզ բարեխօս. 'ի սովու կու
մեռնինք:— Եւ ասաց. Չկայ ճար:— Եւ
նա եզարկ քարովն, և զճակատն պա-
տառեաց, և զտղսմն խափանեաց: Եւ
գնաց զթագաւորին խաղինոյն պատ-
ռեց, և բաղում ինչ եհան: Եւ եկին
հարցին յԱմծախօսն. և ոչ ետուր պա-
տասխանի: Եւ թագաւորն երեկ բո-
րիկ, և ասաց. Չէս խօսիլ, ես զիս կու

1 Ձիուն կաշին:

սպաննեմ: Եւ ասաց Ամծախօսն, թէ
թագաւորն ողջ կենայ. հէնց ժամանակ
հասանք, որ ով գողորդն կ'ասէ՝ քարով
'ի զլուխն կու տան:

ԻԻԿԱՐ

ՄԱՀ ԿԵՍԱՐՈՒ

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

(Տես Էրես 222)

ՏԵՍԱՐԱՆ Գ

ԿԵՍԱՐ ԴԵԷԼ, ԲԻՐՈՒՑՈՍ Ե ԺԱՂՆԱՐԴՆ:

ՈՄՆ. Չինչ իրք իցեն, զի է աղաղակս. զինչ իցէ
արիւնս. Բրուտոս սուսեր 'ի ձեռին արձանա-
ցեալ կայ:

ԲԻ. Ժողովուրդ արիսեան, Եթէ իցես դեռ ևս.
անդր յայն վայր դարձուցէք զաւս ձեր, տեսէք,
ո՞ անկեալ դնի յարեան իւրում:

ԺՈՂՈՎ. Կեսար, յարեան թաթաւեալ. ո՞ աշ-
խարհի տեսարան:

ԲԻ. Այո, այո, նա ինքն Կեսար յարին թաւալի.
և թէպէտ անարին երկաթ 'ի ձեռս տեսանի,
սակայն ես ինքն ես ընդ այլոց զԿեսար սպանի:

ԺՈՂ. Այ անագորոյն դահիճ, մեռցիս և դու...

ԲԻ. (Ետեալ զառն 'ի վերայ իրօր) Ահա իմ սուսեր
առ իս ուղղեալ կայ. մեռայց ես, սակայն լուա-
րուք ինձ նախ ժողովուրդ Հռովմայ:

ԺՈՂ. Հարցի վաղագոյն դահիճ Կեսարու:

ԲԻ. Սակայն մի, 'ի զուր, խնդրէք գուք այլուր
զգահիճ Կեսարու. ահաւասիկ ես ինքն Բրու-
տոս, ես ձեր եմ սպանդ սրոյդ ծարաւոյ. թէ 'ի
վրէժ արեան այսր գիմեալ գայք ձեր գիկատու-
րի. ահաւասիկ ձեզ գլուխ Բրուտոսի: Իսկ թէ
ճշմարիտ սէր ազատութեան վառի տակաւին 'ի
ձերում սրտի, արդ ուրախ լերուք՝ զի վախճան
եղև ձերոյ արքայի:

ԺՈՂ. Չինչ խօսիս:

ԲԻ. Ոչ ինչ ստեմ, և երդնում ևս, զի թագաւո-
րեալ էր Կեսար Հռովմայ, իշխանաբար խօսեր
աստ ընդ մեզ, և արքայաբար տայր մեզ հրա-
ման. ոչ այսպէս իսկ տեսէք գուք զնա անդ 'ի
լուպերկալ, յորժամ իբրև յակամայս առնոյր
'ի գլուխ թագ արքայական. և զի գիտաց թէ ոչ
այլազգ ինչ քան թէ բռնաբար մարթէ թագա-
ւորել, աստ յայսմ ատենի յոխորտ բարբառով
հրաման արձակէր ընդդէմ Պարթևաց դարձեալ
վերստին 'ի կռիւ գումարել, յորժամ Հռովմայ
պակասեալ էն գանձք, զէնք և քաջորեր. իսկ առ
ինչ ապա. զի դարձ արարեալ ծանր ձեռամբ և
ուժգին աւարաւ՝ բռնացի զինու թագ 'ի գլուխ
կապել: Իւրով պարգևօք նա զսիրտս ձեր հնարէր
գիտել. սակայն անգործ դարձան զէնքն. զի զա-
զատութիւն գուք ոչ յանձն առնուք երբեք վա-

ճառել. նա աւանդիկ տեսանեմ զձեզ վասն ազա-
տութեան 'ի մահ արշաւել: Արդ ահա աշուհսիկ ա-
զատացաւ Հոովմ, թող ապա այսուհետեւ մեռցի
Բրուտոս. հապա, սպանէք զնա որ ձեզ կեանս
և ազատութիւն պարգևեաց. ահա աւսիկ եմ,
'ի վրէժ արքային հարցի Բրուտոս, որ միանգամ
ոչ ցանկայ ազատութեան, պատահեցի ինձ:

ՈՍՆ. Զինչ իցեն բանքն, ոմն յաստուածոց բար-
բառի 'ի նմա:

ԲՐ. Ահ, այժմիկ ճանաչեմ զձեզ հարազատ որ-
դիս մօր մերոյ Հոովմայ. այլ թէ և Բրուտոս
հոովմայեցի իցէ, աղէ լուարուք զոր ակն ոչ ու-
նիք. Կեսար հայր իմ էր:

ԺՈՂ. Բարէ, զինչ ասես, ճամբրիմ...:

ԲՐ. Ճամբրտութեամբ ասեմ, զի որդի նորա եմ,
և դահուն իւրում զիս ժառանգ կարգէր, և զա-
մենայն խորամանկեալ նենգութիւն ինձ 'ի դուրս
բերէր:

ԺՈՂ. Ո՛վ անիրաւ յանգանութեանն:

ՈՍՆ. Ապա հաւաստի բռնաւոր էր նա:

ԲՐ. Արտասուեցի ես, աղաչեցի որդիբար, և
իբրև Հոովմայ քաղաքացի 'ի բաց կալ յանօրէն
մտածութեանցն. զինչ ոչ գործեցի չըջել զնա
յարքայութենէն. այլ և մահ ինքնին խնդրեցի
'ի նմանէ. սակայն զուր տարապարտուց. յա-
մառեալ պնդեալ կայր նա կամ մեռանել կամ
թաղաւորել. սակայն իմ բազուկ յամբառնալ
իւրում կախեցաւ անգործ:

ԺՈՂ. Ո՛հ առաքինութեանն, ո՛ր ճամբրիտ Բրու-
տոս:

ԲՐ. Հոովմայ սատակեցաւ բռնաւոր. գոհու-
թիւն աստուածոց. սակայն զի Բրուտոս զհայր
իւր սպան... մահապարտ է նա, 'ի ձէնջ ակն
ոռնի պատահել մահուան. միթէ ես արդեօք
կենաց ինչ ցանկամ. սակայն ներեցէք, սամ մի
շնորհեցէք հանել զազատութիւն յանգործ մահ-
ման, ապա յայնմ հետէ հայրասպան որդին ելցէ
յողմակէզ գնալ զիւրովին առ հօրն դամբան.
(Լա):

ՈՍՆ. Ո՛ր աղետալից բարբառ:

ԱՅԼ ՈՍՆ. Ո՛ր զարմանք տիրալի:

ԱՅԼ ՈՍՆ. Բարէ յարտասուս լուծաւ և Բրու-
տոս 'ի զայրոյթ սրտին:

ԲՐ. Արտասուեմ յիրաւի, ո՛ր իմն Հոովմայեցիք,
զԿեսար արտասուեմ, զի չէր որ յերկր նմին
զուգական. ո՛ր անկարեկիր սիրտ ոչ արտօսր կա-
թեցուցէ 'ի նորին մահուն. այլ որ կենդանու-
թեան նորին փափաքէ՝ հոովմայեցի երբեք նա
ոչ է:

ՈՍՆ. Ահ Բրուտէ, փայլատակունք հատանին 'ի
չրթանց քոց:

ԲՐ. Փայլակնացին արդ ձեր սուսերք, աղէ եր-
թիցուք կանգնել զխոփն զազատութիւն Հոով-
մայ. ընթացուք 'ի Կապիտոլիոն, նա ինքն է
դահ ազատութեան. թողուցուք զնա 'ի մար-
դախոշոշ ձեռս բռնաւորաց:

ՈՍՆ. Հարցուք, սատակեցուք, վանեցուք
զնոսա:

ԲՐ. Ի մահ, 'ի մահ ընթացուք կամ յազատու-
թիւն:

ԺՈՂ. Ի մահ ընդ Բրուտոսի, 'ի մահ ձեպեցուք
կամ յազատութիւն:

(Ախտին գնալ մինչ 'ի մահ իողմ. ԲՐ. Ելանէ):

ՏԵՍԱՐԱՆ Դ

ՏՈՒԱՐԵԼԼԱ ԿԱԳՆԱԿԱՊ

ՏՈՒ. (Յանգէր) Յո՛րդիմեալ էք, ո՛ր Հոովմայեցիք,
անսացէք ինձ, զինչ իրք իցեն. բարէ, արեամբ
շաղախեալ է յատակս... Կեսար... վահ, եղունկ
զինեւ. ոչ իսկ և սիրտ իմ գնաց. զինչ գործ էր
որ գործեցաւ, ո՛ր Հոովմայեցիք:

ՈՍՆ. Եւ համբուն իսկ գիտես ոչ...:

ՏԵՍԱՐԱՆ Ե

ԿԱՍՏԻՈՍ ԲՐԻՆՈՒՄ ՍՈՒԵՐԱՍ

ԿԱՍ. Եթէ ողջն իցէ, ո՛ր իմն Հոովմայեցիք:

ՈՍՆ. Զինչ ողջն, անօրէն բռնաւոր. զի խնդրես.
(Յգէ Կաստիոս):

ԿԱՍ. Ես եմ Կաստիոս. արդ ուրախ լերուք, ո՛ր
Հոովմայեցիք. կատարեցաւ գործն. սատակե-
ցաւ բռնաւորն, բարձաւ 'ի միջոյ, նոյնպէս կո-
րիցեն ամենայն թշնամիք Հոովմայ:

ՏՈՒ. Լուարուք ինձ, ո՛ր Հոովմայեցիք, անսացէք
ինձ. հարցուք զսա, գէշ գէշ պատաւեսցուք
զանօրէն դաւաճանդ. (Յգէ Կաստիոս):

ԿԱՍ. (Ապա-խնեալ 'ի Հոովմայեցիս). Լուարուք ինձ,
ո՛ր Հոովմայեցիք, նախանձաւոր լերուք ինձ Կաս-
տիոսի, ծնունդդ դիւցազմն, յաղթականը աշ-
խարհի. ազատեցայք 'ի գերութենէ, ոչ ևս էք
գուք ծառայք. կեցցէ Հոովմ, կեցցէ ազատու-
թիւն, 'ի ձեռն Կաստիոսի խորտակեցան շղթայք:

ՏՈՒ. Դահիճ ուրեմն լինիջք, ո՛ր Հոովմայեցիք,
դիւցազուն արեանն:

ԿԱՍ. Ես ինքնին դահիճ եղէ բարեկամին, ձեր
փրկութեան աղագաւ. նա ձեզ գերեաց, ես
զարին նորա հեղի: Իցէ որ թերևս 'ի ձեզ այն-
չափ անարդ և անարի որ ողբասցէ զԿեսար և
զգերութեան նորա. ո՛ր իցէ նա, ո՛ր իցէ անազ-
գին այն հոովմայեցի, որ խնդրէ արքայ. թող
խօսեցի եթէ իցէ որ արդեօք, ինձ Կաստիոսի
յանգիման ելցէ... Ս'ն անդր 'ի բաց կացցէ առ
'ի ձէնջ վատութիւն այգալիսի. ամենեքին դուք
ազատութեան էք սիրօղք, և գովէք զմեզ:

ԺՈՂ. Բռնաւոր էր Կեսար, կորիցէ յիշատակ
նորա:

ԿԱՍ. Ո՛վ վեհազուն իշխանը աշխարհի, ո՛վ երջա-
նիկ ծնունդդ Հոովմայ, անմահասցի 'ի ձեզ այդ
սիրտ քաջազուն: Յաւ է ինձ զի զանօրէնն Ան-
տոնիոս ոչ կարացի գտանել, հանել ընդ կա-
ռափն նորա. գիտեմ ես զի ընդ հուպ հասցէ
նա այսր ապաւինել առ ձեզ. այլ յուշ լիցի ձեզ
զի անդատին 'ի մանկութենէ սիրեաց նա ծառա-
յել Կեսարու, ընդ նովաւ վարժեցաւ և նա յան-
օրէն բռնութիւնն, բռնաւոր է և նա: Նա արդ
եկեցէ հասցէ արդարացուցանել յաչս ձեր
զբռնաւորն և զբռնաւորութիւն նորա. այնպէս
իմն յաչս իւր եղեալ է զձեզ, մինչև ակն ոռնի
խաբել պատրել հրապուրել զձեզ: Օրէնք են
նմա գալ խօսել առ ձեզ, քաջ է, սակայն Ժո-
ղովուրդ Հոովմայ նստցի իշխան և գաւառաւոր ա-
նաչառ. Կեսարու, Անտոնիոսի և մեզ գլխովին.
առէք դարձեալ 'ի ձեռն զօրէնս ձեր և զիրա-

ւանս, զոր կապտեաց բռնութիւն. բռնաւորն
կեսար յափշտակեաց զայն 'ի ձէնջ. ես դար-
ձեալ առ ձեզ դարձուցանեմ և յաւիտեան խըն-
դրեմ հաստատել: Եւ արդ գառնամ ես 'ի կա-
պիտովին. սինկիթոսն անդէն ինձ սպասեալ
մնայ. գնամ ես ընդ նոսա ածել դարձեալ 'ի
վերայ տառապեալ քաղաքիս զարգարութիւն և
զփառս, զօրէնս և զաստուածս, շիջուցանել
զխռով թշնամեաց, և կանգնել միւսանգամ զկոր-
ծանեալ գահ ազատութեան: Շատ է ինձ, իմս
Հռովմայեցիք, եթէ զուք երջանկութեան միայն
փափաքեցէք. մի անձամբ անձին մասն լինիցիք
թշնամոյն. զայս միայն խնդրեմ ես 'ի ձէնջ,
զայս միայն աղաչեմ. մի հաւատայք Անտոնիոսի,
երկերուք 'ի նմանէ, և առաւել երկերուք 'ի
խորամանկ խաբէութենէ նորա:
ՈՍՏ. Եթէ նա զձեզ դատապարտ առնիցէ, կո-
րիցէ և նա:
ԿԱՍ. Յուշ լիցի ձեզ երգումն ձեր, ո՛ Հռովմայե-
ցիք, և փրկեցաւ Հռովմ. (էլաւ):
ԺՈՂ. Կեցցէ կասկիս, կեցցէ Բրուտոս, փրկու-
թիւն Հռովմայ:

Կը շարունակուի:

ԲԱՆԱԼԻՔ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՅ

(Տես Երես 223)

501 Ինչ գոյն ունին սովորաբար հե-
ղանիւթոց բոցերն, ինչպէս ձէթ, մեղրա-
մոմ, ճարպ, գետնածուղ, և այլն: —
Ասոնց գոյնն փոփոխի ըստ թանձրու-
թեան բոցոյն, և ըստ քանակութեան ի-
րենց պարունակած ածղուկին, և այն
օդուն՝ որուն մէջ կ'այրին:

502 Ինչո՞ւ երբեմն բոցն տոգոյն դեղին
գոյն մը կ'առնու: — Որովհետեւ ածղուկն
որ իրեն կու տայ՝ կը կրէ կատարեալ կի-
զում մը և լուսակիզն կ'ըլլայ: Սովորա-
կան աղէկ կրակի մը բոցն այս գոյնը կ'ու-
նենայ:

503 Ինչո՞ւ համար տոգոյն դեղին բոցն
քան զկարմրագոյնն աւելի շատ լոյս կու
տայ: — Որովհետեւ առջինին մէջ ածղուկն
աւելի լուսակիզն է, և արձրկած լոյսն կը
ծագի աւելի արագ և աւելի ազդու շար-
ժող գոյութենէ մը, որով լուսաւոր և
թերն՝ որ անկէ կը տպաւորուի, զանկայ
մեզի կանդաղադարձնէ աւելի արագ և ա-
ւելի բազմաթիւ թրթումունքներով:

504 Ինչո՞ւ համար որչափ աւելի բոցն
թանձր ըլլայ՝ այնչափ ճերմակ կ'ըլլայ: —
Որովհետեւ անոր մէջ ածղուկն ամբողջա-
պէս լուսակիզն եղած է:

505 Ինչ բանէ կը ծագի ճրագի մը

տաքութիւնն: — Ի վերմայնութենէ, որ
կազերուն կամ կիզանուտ շոգիներուն՝
օդուն թթուածնին հետ զուկակցելէն ա-
ռաջ կու գայ:

506 Ինչո՞ւ համար բոցն դէպ 'ի վեր
կը բարձրանայ: — Որովհետեւ կը տաքը-
նէ իր չորս կողմի օդը. տաքցած օդն ալ
շուտով վեր բարձրանալով՝ բոցն ալ դէպ
'ի վեր կը քաշէ:

507 Ինչո՞ւ համար ճրագին բոցին ծայրը
սուր կ'ըլլայ: — Որովհետեւ շոգիներուն
բարձրացած կոնոնն պատրոյգէն հեռանա-
լով հետզհետէ կը սպառի, և հետեւաբար
բոցին քանակութիւնն ալ նոյն համեմա-
տութեամբ կը նուազի:

508 Ինչո՞ւ համար պարարտ մարմնոց
բոցն, զոր օրինակ փայտին, և այլն, ջրով
կը պատէ պաղ մարմին մը՝ եթէ քիչ մը հե-
ռու իր վրան բռնուի: — Որովհետեւ կիզ-
ման ատեն ջրային շոգի կը ծնանի, մէկ
մը, նոյն իսկ մարմնոց խոնաւութենէն՝
կիզման միջոց, մէկ մ'ալ ջրածնին՝ օդուն
թթուածնին հետ զուգադրելէն, երբոր
այս ջրային շոգին հանդիպելով պաղ մար-
մնոյ մը՝ անոր վրայ կը մնայ ջուրի պէս
խտանալով:

509 Ինչո՞ւ համար եթէ դարձեալ տաք-
ցուի այն մարմինն՝ որուն վրայ ջուրն կեցեր
էր, ամենեւին խոնաւութեան հետք չի մնար:
— Որովհետեւ այն ատեն իր բարեխառ-
նութեան աստիճանն շատ աւելի բարձր
կ'ըլլայ՝ քան որչափ որ պէտք էր ջուրն շո-
գիացնելու համար. և շոգին՝ որ կիզման
միջոց կը ձևանայ՝ չի խտանար, այլ թէ իր
թեթեւութեամբն և թէ տաք օդոյ սիւնովն
կը բարձրանայ:

510 Ինչո՞ւ համար՝ երբոր բոցին վրայ
բռնուի ձեռքն, աւելի տաքութիւն կը
զգայ, քան երբ քոփնտի կամ բոցին տակն
բռնուի: — Որովհետեւ տաքցած օդն կը
դիմէ բարձրանալու, և ձեռքին վրայ կը
հասնի ու կը պատճառէ սաստիկ տաքու-
թեան զգացում մը. մինչդեռ ձեռքն՝ երբ
կողմնակի կամ տակն բռնուի՝ միայն ճա-
ռագայթեալ ջերմութիւնը կ'ընդունի:

511 Ինչո՞ւ համար սնունդն պակսած
բոցն՝ մարելէն առաջ՝ լուսաւոր կայծիկ
կ'արձրէ: — Որովհետեւ այն ատեն բոցն
շարունակ չընդունիր կիզանուտ կազերը.
և անոր համար երբ պատրոյգին վրայ
հասնին պարարտ գոյութեանց պզտի մա-
սեր, այն արագութեամբն՝ որով ինքը զա-
նոնք կը լուծէ, կը մատակարարէ բոցին
պայծառ և յանկարծական լոյս մը. բայց
երբ այս միացած մասերն ալ կը հատնին՝
բոցն կը մարի: